ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ		
Հ/Հ	*Փաստաթուղթ*	*Ներկայացման ձև*
1.	***Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմում***	Բանկի աշխատակցի կողմից տպագիր տեսքով լրացված և հաճախորդի կողմից ստորագրված բնօրինակ
2.	***Հաճախորդի նույնականացման փաստաթուղթ*** Բոլոր հաճախորդների համար (ՀՀ քաղաքացի, ոչ ՀՀ քաղաքացի): 1. անձնագիր կամ նույնականացման քարտ	Բնօրինակ
3.	***Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր***	
	Բանկի աշխատակից հանդիսացող հաճախորդներին համար	Էլեկտրոնային ֆայլի տեսքով՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերում նկարագրված կարգի
	Վարկավորման պայմաններով սահմանված լինելու դեպքում՝ վարկային գծի տրամադրման վճարի Բանկում մուծման անդորրագիր	Բնօրինակ
4.	***Հաճախորդի զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների) չափը հիմնավորող փաստաթղթեր****	
	1. Բանկում 4 և ավել ամիս վճարային քարտի միջոցով աշխատավարձ ստացող և Աշխատավարձային վարկավորման պայմանների համաձայն հավատարմագրված կազակերպությունների աշխատակիցների համար	Պարտադիր չէ**
	2. Նորք ՏՎԿ-ում հարցմանը նախորդող 4 և ավել ամիս անընդմեջ աշխատվայրի առկայություն	Պարտադիր չէ***

	3. Աշխատավարձային վարկավորման պայմանների համաձայն հավատարմագրված կազակերպությունների աշխատակիցների համար, որոնք առնվազն մեկ անգամ Բանկի վճարային քարտի միջոցով ստացել են նվազագույնը տեղեկանքում նշված կամ հայցվող վարկային սահմանաչափին բավարար չափով աշխատավարձ կամ հարցման պահին Նորք ՏՎԿ-ում առկա է աշխատանքի մասին գրանցում	1. Կազմակերպության կողմից սահմանված ձևով տեղեկանք, որը պարունակում է հետևյալ պարտադիր տեղեկատվությունը՝ - Հաճախորդի անձնագրային տվյալներ (Անուն, Ազգանուն անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար), - Հաճախորդի պաշտոնը, - Հաճախորդի ամսական հիմնական աշխատավարձը դրա զուտ (հարկային պահումներից հետո) կամ պայմանագրային լինելու մասին նշումով: Ընդ որում միայն պայմանագրային գումարի նշումի դեպքում զուտ աշխատավարձի հաշվարկն իրականացվում է Բանկի կողմից՝ պայմանագրային գումարը նվազեցնելով եկամտային հարկի, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին մասնակցության վճարների, դրոշմանիշային վճարների և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների չափով - Տեղեկանքի տրման ամսաթիվը: Ընդ որում, տեղեկանքը ընդունվում է, եթե դրա տրամադրման ամսաթվից հետո չի անցել 15 օր, - տեղեկանքը ստորագրող իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը, առկայության դեպքում՝ կնիքը, - Եթե տեղեկանքը ներկայացվում է անմիջապես կազմակերպության կողմից էլ. փոստի միջոցով՝ Կազմակերպության էլ. փոստի հասցեն՝ որից կարող է ներկայացվել համապատասխան տեղեկանքը: Ընդ որում՝ այս դեպքում տեղեկանքն ընդունելի է, եթե այն ստացվել է տեղեկանքում նշված էլ. փոստի հասցեից Բանկի՝ ardshinbank.am դոմեյնով էլ. փոստի հասցեին՝ բնօրինակի սկանավորված տարբերակով:

	4. Աշխատավարձային վարկավորման պայմանների համաձայն հավատարմագրված ուժային կառույցների, իրավապահ, դատական և հարկադիր ծառայությունն իրականացնող մարմիններ (ՀՀ և ԱՀ Պաշտպանության նախարարություն, ոստիկանություն, դատարաններ և դատական դեպարտամենտ, դատախազություն, քննչական կոմիտե, հատուկ քննչական ծառայություն, ազգային անվտանգության ծառայություն, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Արդարադատության նախարարություն) ծառայողների/աշխատակիցների համար, որոնք Բանկում բացված վճարային քարտի միջոցով դեռ աշխատավարձ չեն ստացել	1. Նախորդ կետով սահմանված տեղեկանք**** և 2. Բանկային հաշվի քաղվածք, որտեղ կարտացոլվի ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան հաշվից ստացված դրամային մուտք քաղվածքի ներկայացմանը նախորդող 30 օրվա ընթացքում առնվազն 1 անգամ
	5. Աշխատավարձային վարկավորման պայմանների համաձայն հավատարմագրված կազմակերպությունների աշխատակիցների համար (կիրառելի է, եթե ապահովված չեն նախորդ կետերի պահանջները)	1. Նախորդ կետով սահմանված տեղեկանք և 2. Առնվազն 3 ամիս վաղեմության աշխատանքային պայմանագիր առնվազն տեղեկանքում նշված չափով աշխատավարձով կամ 3. Այլ բանկից քաղվածք, որտեղ կարտացոլվի նշված գործատուից առնվազն տեղեկանքում նշված չափով աշխատավարձի ստացումը: Ներկայացված տեղեկանքի և պայմանագրի կամ քաղվածքի մեջ աշխատավարձի անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում դրանցից նվազագույնը:

5.	4. Տրամադրվող վարկի հաշվին Բանկում կամ ՀՀ այլ բանկերում գործող վարկի կամ վարկային գծի մարման դեպքում նաև՝ 1) Բանկում կամ ՀՀ այլ բանկերում գործող վարկի կամ վարկային գծի մարման վերաբերյալ դիմում, Այլ բանկում վարկի կամ վարկային գծի մարման դեպքում նաև՝ 2) Այլ բանկի կողմից տրված վարկային հաշվից քաղվածք կամ վարկը սպասարկող բանկի կողմից տրված տեղեկանք, որտեղ արտացոլվում է նոր վարկի հաշվին մարման ենթակա վարկի (վարկային գծի) տվյալները (վարկի գումար, վարկի մարման հաշիվ և այլն), տրամադրվող վարկի հաշվին մարման ենթակա պարտավորության ծագման հիմք հանդիսացող պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը: Ընդ որում նշված քաղվածքում պայմանագրի տվյալների բացակայության կամ թերի լինելու դեպքում պահանջվում է նաև համապատասխան պայմանագիրը Սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը չի պահանջվում այլ բանկի կողմից տրված վարկային կոդի ներկայացման դեպքում:	1) Բանկի կողմից սահմանված ձևաչափով վավերացված դիմում 2) Քաղվածքը կամ տեղեկանքը՝ առավելագույնը 15-օրյա վաղեմության, բնօրինակ 3) պայմանագրի պատճենը

* Նույն վճարային քարտի միջոցով մեկից ավել կազմակերպություններից ստացվող զուտ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարների) չափը հիմնավորող տեղեկությունների ներկայացման անհրաժեշտության դեպքում՝ Բանկը որպես զուտ աշխատավարձ (դրան հավասարեցված այլ վճարներ) դիտարկում է ստացված աշխատավարձերի (համաձայն ** կետում նկարագրված կարգի) և Բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանքների ներկայացման դեպքում՝ տեղեկանքներում նշված զուտ աշխատավարձերի հանրագումարը: Ընդ որում, եթե ներկայացված տեղեկանքների առանձին ներկայացման դեպքում Հաճախորդին հասանելի կլինեին տարբեր վարկավորման պայմաններ, ապա դրանց միասնական ներկայացման դեպքում հասանելի վարկավորման պայման է համարվում քարտի տրամադրման համար հիմք հանդիսացող կազմակերպության հետ համագործակցությամբ սահմանված վարկավորման պայմանը:

** Որպես զուտ աշխատավարձ դիտարկվում է այն ամսվանը, որի ընթացքում ստացված զուտ աշխատավարձը նվազագույնն է դիտարկվող չորսից: Կազմակերպության կողմից տրված տեղեկանքի ներկայացման դեպքում առաջնայնությունը տրվում է ներկայացված տեղեկանքում նշված զուտ աշխատավարձի չափին: Այն դեպքում, երբ վերջին 4 ամիսներից մեկի ընթացքում աշխատակիցը մեկնել է արձակուրդ, որի պատճառով այդ ամսվա համար վճարումը ավելի փոքր է՝ արձակուրդային ամիսը հաշվարկին չի մասնակցում, իսկ որպես դիտարկվող ամիս մասնակցում է նախորդողը: ՀՀ ՊՆ աշխատակիցների համար որպես զուտ աշխատավարձ հիմք է ընդունվում քաղվածքում արտացոլված ՀՀ ՊՆ կողմից փոխանցված նաև «ռազմական կարիքներ» նպատակով մուտքերը:

*** Որպես զուտ աշխատավարձ դիտարկվում է գրանցված վերջին միջին աշխատավարձն առանց հարկային պահումների:

**** Եթե 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատնքը տրամադրվում է անմիջապես գործատուի կողմից, ապա 2-րդ ենթակետով նախատեսված քաղվածքը չի պահանջվում: